

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարաբարձրացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция „Мшак“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սուր օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթ:

Հայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

### ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Այն ժամանակ ուրիշ բան կը լինի:—Ներքին տեսութիւն: Նամակ Մեղրից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Վրաստան: Թղթակցութիւնը:—Վշակի հեռագրերը:—Փայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Երեսփոխ:

## ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՐԻՑ ԲԱՆ ԿԸ ԼԻՆԻ

«Մշակի» 158 համարի մէջ պ. Հասնազար, կ. Պօլսի «Կարոցասիրաց-Արեւելեան» ընկերութեան ներկայացուցիչը, մի նամակ է տրւել, որի մէջ հաշիւ է տալիս ուսաստանցի հայերին իր գործունէութեան մասին: Պարոնը ասում է իր նամակի մէջ, որ մինչդեռ ուսաստանցի հայերը 12,000 ռուբլ տուեցին «Արարատեան» ընկերութեանը, կ. Պօլսի

քաղաքը, միմիայն, 30,000 ռուբլ նուիրեց ընկերութիւններին...

Մենք չենք կամենում խօսել պ. Հասնազարի ամբողջ նամակի վրա, որ մեզ չէ վերաբերվում, այլ վերաբերվում է Ռուսաստանի ամբողջ հասարակութեան, այլ կողմնայինը միայն նուիրատուութիւններին վերաբերեալ կէտի վրա խօսել:

Պարոնը մոռանում է, որ Ռուսաստանցի հայերը, բացի «Արարատեան» ընկերութեանը իրանց նուիրած գումարից, ամեն օր հազար ու մի ուրիշ նուիրատուութիւններով են բեռնաւորված: Այլ կերտից գաղթում են հայեր դէպի Ռուսաստանի սահմանները, — ուսաստանցի հայերը հազարներ են նուիրում: Գալիս է այս կամ այն քաղաք Ս. Լյւմիածնի կոնդակով մի հայր Ստեփանէ, մի

հայր Բաստամեանց, կամ մի ուրիշ հայր սուրբ, — ուսաստանցի հայերը հազարներ են նուիրում: Գալիս է մեզ մօտ, նոյնպէս Ս. Լյւմիածնի կոնդակը ձեռին, մի որ և է Ռուբինեան վարդապետ, երազական երկրագործական ընկերութեան անունով փողեր հաւաքելու համար, — Ռուսաստանի հայերը դարձեալ հազարներ են նուիրում... Ո՞ր մէկն ասենք... Լչ չենք խօսում հազար և մի ներքին, բարեգործական, թատրոնական, դպրոցական և այլ ընկերութիւնների կամ մասնաժողովների մասին, որոնք բոլորն էլ ուսաստանցի հայերի բաւական մեծ գումարներն են կլանում... Լչ չենք խօսում Ս. Լյւմիածնի ձեմարանի պէս մի հաստատութեան մասին, որտեղ թափվում են տարիներով հայի արծաթները...

Եւ այդ բոլոր ահազին գումարները հայր յիմարաբար տուել է, տալիս է և կը տայ, առանց հաշիւ ու համար պահանջելու այն անձինքներից, որոնց յանձնում է իր փողերը:

Մանաւանդ որքան հեշտութեամբ տալիս է հայր, չքաւոր հայր, իր վերջին կօպէկը, եթէ պահանջողը մի հայր սուրբ է, մի անբեղայ է, որ զիտէ եկեղեցիներում աստուածապաշտ քարոզներ կարդալ... Բաւական է եթէ մի մարդ հազնված լինի արեղայական զգեստներով, — էլ հայր չէ հարցնում կոնդակի թղթաւորութիւն ունի նա թէ ոչ, աղին, օրինաւոր, ազգասէր մարդ է նա, ազգօգուտ գործի է ծառայում նա, թէ թափառական, շրջմոյլի բաղդալինդիր մի էակ է... Փողերը թափվում են ու թափվում նրա զրպանները...

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԵՐԵՎԱՆ

Նա էլ պարագաների թիւն էր պատկանում, հետեւաբար գործունէութիւնի մէջ անբասն ատուի, որքան ծոր-չըրեր ծառը մրգատուի մօտ:

Գործ ունեցող լինել — աս նեշտ չէ անփող մարդերի համար, իսկ նա սկզբում ոչնչից ոչինչ չունէր:

Շատախօս, ճոռումբան, — նա վաղուց է փախել սեփական վաստակից: Նրա փողը կտանում է օրական եօթ մարդի հացով: Նրա համար սեփական տուն չը կայ. իր տունն էլ թողած չուարի գերի է նա:—Սա մի հիւանդութիւն է այն մարդերի համար, որոնք մի ժամ նստած քո մօտ, եօթ անգամ ծալած ծնկները կը քանդեն, եօթ անգամ ծղպտակ կանեն, «Շահ-Սմայիլ» նաղը կըսկան, էլ չեն դադարի, մինչև որ մի բաժակ օղի կամ մի կտոր հաց չես տայ, որ ուտեն, հեռանան, աւաղ լինեն քո կողքը...

Երեսին նայելով, դու նրա ճակատին, կաւիճն առած իսկոյն, կամ հէնց ամուսնով, կը զրէիր «ոչնչի անպէտք»:

Պաշտօնների մէջ ժողովրդական կարծիքով անպէտքների թիւն պատկանում է և երեսփոխութիւնը:

«Ինչ յարմար է. ուղիղ նրա վրա է չափած ու ձևած» վկայում էին շատերը:

Բայց մեր անդամաւորներն հրատարակեց այդ պաշտօնի, ինչ է ք. կարծում ինչը, — շահաւոր (Բ. Է. Ղ. Ս.) կողմը:

Ժողովրդի մէջ, մի խօսք այստեղ, մի խօսք այնտեղ — հը, հը — և ահա լավեց, որ միւս օր եկեղեցու դրանք երեսփոխի ընտրութիւն պէտք է լինի:

Կամաւորների ու մտքաւորների աչքը լոյս, բայց աւելի նրա աչքը լոյս...

Ամենքն իրանց ականջի բուրդը հանեցին — վաղը երեսփոխի ընտրութիւն է:

«Ինչ բան է և երեսփոխ ու թիւնը»  
—Մի պաշտօն, որին հսկողը եկեղեցու պատերն ու պատկերներն են և որ յանձն է առնում մարդ ժամանակաւորապէս, մեծ խոտուսներով, իսկ յետ դարձնում, երբ ինչն է ցանկանում, այն էլ անհալի:

Մեր երեսփոխի համար դեռ չէ ստեղծվել օրինաւոր ոչ հայի, ոչ կիլիք և ոչ էլ մատենա: Ամեն բան խօսքի փոքր քանակով վրա է. շատ աւարկարող եւ քիչ ցոյց տալ, շատ կերպը կարող եւ ուրանալ իսպառ. և ամեն դժուար դէպքում վկայ կանչել եկեղեցու պատերն ու պատկերները, իսկ եկեղեցու արկացուն, տէրութեացուն, ժամապն ու մղոսին, ամենքն էլ վկայ են ու վկայ, եթէ սրանցից մինն ու միւսը եղել են քո աւարկութիւնների խորհրդակից, լծակից...

Երեսփոխութեանը չունի ոչինչ դժուարութիւն. պէտք է շարաթ, կիրակի, թող հէնց ընդէմ համաձայնեցիք, վաղ-վաղ լինես եկեղեցի, մտերի վրա հսկես, դեռ կիսավառ հանգցես, նորից նորոգես, 5 անգամ ծախես — յօգուտ տաճարի պայծառափայլութեան:

Իրաչաւմբայր, պատկազրամ առնես, ջերդ դնես — վառն ի վերուստ եկեղեցու շինութեան. հարսանիքին, կնքուստեքին անպակաս լինես. տարէնը մի քանի անգամ էլ եկեղեցին սրբել տաս, հին ծածկոցները, հնորի հալաները (լաւ չէ աչք տեսնելու) անհետացնես, ակունքով ծանրաբեռնված պատկերներն ու սեւտարան, մատուցները թողան հան անես, իրանց բեռից թեթեւնես, արկացուի, լուսարարի հանելիքից կտրես, դանձարանը հարստացնես — դարձեալ յօգուտ Աստուծոյ տաճարի մաքրագործութեան...

Եկեղեցու ժողոված մանր փողերը մեծաթղթի հետ օգտով փոխարինես, ուխտատեղից, մատաղանայ — ինչ որ կը գոյանայ — ձեռքդ դցես, գումար չինես, այդ փողով քո անունով գիւղեր գնես, — կրկին ի փառս Աստուծոյ:

Չհանալի է և ոչ անալի. բայց հաղիւ այդ ամենի համար, անպէտք գլխացաւանք է, մանաւանդ չը գիտես քո ձեռքով լաւ ստորագրել:

«Հէնց իմ բանն է» մտածում է նա և պատրաստված ներկայանում վաղվան ընտրութեանը...

Վեզանում, ամենայնի հայերի մէջ, շատ անգամ խնդրել լուծվում է ձայների բաղմութեամբ.

խաժամութ ամբողջ, դեռ չլսացած բանն ինչուն է, մի շուտ ձայն է տալիս...

«Չէ, Մարկոս ապի, կարալ չեմ — ասում է նա սրա նրա ականջին. — Իրիցփոխութիւնն ո՞վ ես ո՞վ, իրիցփոխը պէտք ա սուրի ըլի, չունք իրիցի փոխանորդն ա. եկեղեցու հմար արին շող տայ, բան ու գործը թողած աղի հմար նահատակիլ, մարտիրոսվի... ասպա ես...»

— Զն. հէնց դու ես, որ կաս:  
— Այսքան կտրեցէք, մին խօսեցէք. ո՞նց էք ուզում, անունը տուէք. հրամայում է բաբիճոցիները բաղկացած ժողովի նախագահ հայր սուրբը կամ ծխատէր քահանան:

Ո՞ր, որ ընտրութեան ժամանակ է հասկացնում պաշտօնատարին իր պաշտօնի կողմը, որ այժմ էլ լավը պիտի:

— Եւ, նա... «գոռում է ամբողջ և մեր Շահան ընտրվում է երեսփոխ:

Աստուած բարի վայելունս տայ:  
— Ի՛նչ, ինչ անենք, սիրելիք. մեղաւոր մարդ եմք, թող մի քանի տարի էլ մենք ապաշխարենք. ինչ կայ որ... ասում է նա:

Միւս օր հին երեսփոխը քեֆ է սարքում և իր պաշտօնը (գիտէք, միայն պաշտօնը) յանձնում նորընտիր երեսփոխին:

VI.  
Անցել է ութ կող տարի:  
Մեր երեսփոխը այնքան է հաստացել, որ հազիւ թէ կարողանայ ջրաղացի դռնով ներս մտնել. նա այլ ևս լայալ չէ անում հասարակ արաղը, գինին, ուսմն ու կարէթն է պարզեւ նրան քուն: Փառաւոր տան մէջ է բնակվում նա և ցոյց տալու թէ 8 տարվայ մէջ որքան է քաւել իր մեղքերը, գաւազանը մի կողմ մնա, քաւում էլ է տէրողորմանց...

Նրա համար ժողովուրդը խօսում է.  
«Տօ, կերաւ, քանդեց. ինչ էք ասում, պէտք է դուրս անենք»:

Բայց ամենքն էլ սուտ են ասում, որովհետեւ հաստատ պնդելու թուղթ ու վկայութիւն չը կայ. Մեր երեսփոխի ծածուկ բանը, չը գիտէ էլ սրբազանը:

— «Իրանք իմ թշնամիքն են, աչքի լոյս, մի հաւատաք», հաստատում է երեսփոխը և դեռ այս ինչ լրագրի մէջ իր գօտեքը լուստում, լաւ անունի տրամաւում... Մեր իմադարին էլ Աստուած բարի տայ, ուսմն ուղենայ հրեշտակ կը չինի, իսկ հրեշտակին սատանայ...

Եւ ահա անմիտ ժողովրդի մէջ յօդուածները յարուցանում են կռիւ ու վեճ...

Ժողովուրդը գոռում, գոչում, երկու կուսակցութեան է բաժանվում...

«Չուրը պղտորվեց. դեռ հրաժարվու ժամանակ չէ» մտածում է նա և իր պաշտօնի վրա այնպէս է ձիւթվում, կպչում, որ հազար ինչով, դերանով էլ չես կարող տեղից շարժել... մէջ տեղը նա իր բանը լաւ է կարգի դնում...

V.  
Հրապարակի վրա ծանուցումն կայ.  
«Այս ինչ օր, այս ինչ տեղ, այսքան գումարով անուրդ (տօրդ) է լինելու, դուստականը (զարդ) է 10,000 ռուբլ»:

— Զն. հէնց հիմի է ժամանակը, մտածում է նա և հրաժարական գրում.

«Նորին բարբ-ուրեան և այն, ի բարեպաշտ յերեցփոխան է աղերասխան խնդիր. Չունքի հիւանդութիւնս ատուել ա, ուստի վասն որպ խնդրեմ կարողութիւն հրաժարակ յերեցփոխութեան»  
— Զաչիւր...

— Զաչիւր. վն, ես հաշուով եմ ստացել, որ հաշուով յետ ամս...»

Ի դուր ժողովուրդը սկսում է թվել այս այն գիտեցած գաղտնիքները:

«Ս. լաւ հն. պիտեմ փորձելից ցաւը. իմ նախորդը քեֆով հաչիւր պարկեց. ընք ձեզ փէշքէ մի լաւ քեֆ. ասում է նա և մի կարաս պընպը՝ ձան գինով հաշուապահանջների որտեղը մեղմացնում, հաշիւն անհաշիւ վերջացնում, այն էլ իր տանը...

Աստուած որդիքի նրա հօր հոգուն:

VI.  
Վերջին:  
— Եկեղեցին մնում է նոյն կողպտեալ աղքատը. վաղուց հատաւ նրա սակին, արծաթը. իսկ մեր մաքրագործիկ հերարտ այժմ փող ու զրա թիւ է և 10 հազարով այդքան էլ աշխատել, իրան ապահովացրել է...

Ո՞վ կարող է նրան մեղադրել. «Եւ էլ էն չի, ինչ որ էր...»

Իսկ նրա գործերը:  
— Իրանք մնում են գաղտնի և ժողոված մի բաւ մէջ: Այդ դատապարտիչ բառը անմուտ է և անբան անմուտ, որքան դեռ ժողովուրդը նրան կոչելու է — «Իրիցփոխ»...

Եթէ Կ. Պօլսի ազգային ընկերութիւնները հետեւէին նրանց մեր տուած խորհրդին, միանային մի ընկերութեան մէջ որ ներկայացնէր Կ. Պօլսի և ամբողջ թիւրքաց Հայաստանի հոգևորական և աշխարհական խնամակալները, բացի սորանց միացնէր իր մէջ լուսաւորչական, բողոքական և կաթօղիկ հայերի թէ հոգևորական և թէ աշխարհական դասակարգերի ամենալաւ ներկայացուցիչներին,—այն ժամանակ ուրիշ բան կը լինէր:

Են ժամանակ թիւրքիայից եկած իւրաքանչիւր հայ պատգամաւորից մեք կը պահանջէինք միացած ընկերութեան կողմից մի վկայաթուղթ, որ գրաւական կը լինէր, թէ մեր տուած լուսնայ ապարդին կերպով կորչելու չէ զանազան բաղադրանքներէ ձեռքուր: Են ժամանակ թիւրքիայի հայերը կը տեսնէին որ ուսաստանցի հայը ժլատ չէ, այլ միայն ապահովութիւն, հաստատ գրաւական է պահանջում...

Են հասարակ մեր ազգի ստորին դասակարգը աւելի զիւրաշատու է, աւելի միամիտ է, քան թէ մեր հարուստների դասը, նա համեմատաբար աւելի էլ առատաձեռնութեամբ է նուիրում, քան թէ մեր հարուստ, ունեւոր դասակարգը: Բայց եթէ Կ. Պօլսում կազմվէր մեր ասած ընկերութիւնը, այն ժամանակ մեր հարուստներն էլ բաց կանէին իրանց բաակները, որոնք երբէք այնքան հեշտութեամբ չեն բացվում, որքան ժողովրդի չբաւոր մասի բաակները: Են ժամանակ զանազան կտակներն էլ կը կատարվէին յօգուտ թիւրքաց հայերի ընդհանուր հայկական ընկերութեան:

Երեւակայեցէք ձեզ մի ընկերութիւն, որի մէջ միացած կը լինէին հայ լուսաւորչականները, կաթօղիկները և բողոքականները, ազգի այդ երեք զօրաւոր բաժիններին պատկանող հոգևորականութեան հետ միասին, և այդ տեսակ ահագին, հոյակապ, հսկայական ընդհանուր հայկական ընկերութիւն իր վկայաթուղթով ուղարկէր իր պատգամաւորին Ուսաստանի հայերից նպաստ հաւաքելու, Հայաստանի մէջ ուսում, կրթութիւն տարածելու, կամ մի որ և է ազգօգուտ հիմնարկութիւն Հայաստանում հաստատելու զիտաւորութեամբ,—ասացէք խնդրում ենք, ո՞վ կը մերժէր, իր կարողութեան չափ, այդ տեսակ հաստատ գործին օգնելու, որ հայ կը հրաժարվէր այդ տեսակ պատկանելի ընկերութեանը պատկանելու, նրա

գործունէութեանը մասնակցելու պատուից...

Հայը երբէք չէ հրաժարվում տալուց, բայց նա շատ անգամ չը գիտէ ում է տալիս և ինչի համար է տալիս...

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՆԱՄԱԿ ՄԵՂՈՒԹԻՅ  
20 օգոստոսի

Չը նայած որ գրվեցան, խօսվեցան այն բանի մասին, որ պէտք է Մեղրի գիւղում, որ կենտրոն է շատ հայաբնակ գիւղերի, մի շինական ուսումնարան հիմնել, բայց տարաբաղաբար մինչև օրս ոչ թէ ինչն ինչն անհաշիւ գործը, թէ ինչ տեսակ ուսումնարան է հարկաւոր, թէ ինչ աղբիւրներով կարող է նա գրովի ունենալ, այլ և իր պաշտօնակատարին անգամ չէ զրկել գործի գրովի իմաստը: Անա պիտի համարձակ, բայց ցաւօք սրտի պէտք է յայտնենք, որ լրագրների մէջ ապոված ուսումնարանաց վերաբերեալ թղթակցութիւնները, որով հրաւիրում է Չոզ. կառավար. ուղարկութիւնը, արձագանք չեն գտնում ոչ մի տեղ, ոչ մէկի մօտ: Մեր առաջնորդները և նրանց պաշտօնակատարները սասնաբարութեամբ են նախում այս բանի վրա: Չարմանալի է թէ ինչի տարբ. Ելմիւսնի գիւղաւոր կառավարութիւնը հայի չէ պահանջում իր պաշտօնակատարներից, ինչի նա չէ աշխատում շահել այն իրաւունքից, որ ինչն ունի:

Շատ կարելի է կան մի քանի տեղեր Հայաստանում, որ կարող են առանց արտաքին օգնութեան, առանց այլոց առաջնորդութեան գործել իրանց օգտին, բայց Մեղրին, ինչպէս և այլ շատերը այդ չեն կարող անել: Մեղրիի հասարակութիւնը լուսաւորութեան այն աստիճանի վրա է կանգնած, որ դեռ ևս չէ մտածում հասարակական հասարակութեան համար գործել նա խելացորտութիւն է համարում, հետևաբար և նա առանց մէկի առաջնորդութեան չէ կարող անել այն, որ հարկաւոր է անել, և մենք մտղբեցուց մեղաւոր չենք կարող համարել:

Չը մտածեն շատերը թէ Մեղրի գիւղում կայ ուսումնարան, լաւ էր որ այդպիսի ուսումնարան չը լինէր, քան թէ կայ: Մենք այստեղ մեր պարտքն էր համարում պատուելի ընկերացուց ցոյց տալ այդ ուսումնարանները, որ ունենան նոքա զազա-վար նրանց վերաբերութեամբ:

Շատերին պատահած կը լինի տեսնել որ շատ յետ ընկած գիւղերում տղէտ ծնողքը իրանց որդի զրկում են ուսուցչի-տիպագրի մօտ, միայն նրա համար, որ բաւարարին նրա շարութիւններից: Այս մի և նոյն բանը պատահում է Մեղրի գիւղում:

Տղէտ ծնողքը որդեց տանից հեռացնելու համար, որի պատճառը վերե առցանքը, ընտրում են մի տիպագրի, կամ մի երկրաւարի, որ պէտք է երկար տարի կործնէ մաշէ սեղանի վրա, որ ար-ժանանայ այս կօման, և հաւաքում են նոքա մօտ երեխայոց, ու խիստ կերպով ստուծ են որ մինչև երեկոյ կարճակէ, որովհետև գալիս են տուն և շարութիւնն անում:

Մեր պարոն ուսուցիչը գիտէ ինչ պէտք է անէ: Մի ժամկէ մէջ իւրաքանչիւրին մօտ քանի դաս է տալիս, որը ուսուցիչը փոխում է ճեւեռեալը տակով, դասը բաղադրած է լինում մի քանի բա-ռից: Ուսուցիչը գտնելի թիւը մեծացնելով խա-փում է ծնողաց որոնք գովում են նրա լաւութիւնը:

Եւ երբ այս դէպքերից յետոյ մի լաւ ուսուցիչ է գալիս, և սկսում է դաս տալ, ժողովուրդը ըս-կիցից սկսում է խօսալ, որ նա օրը հինգ դաս է տալիս, դեռ կէտօրից քիչ անցած արձակում է և աւելի էլ է ուղում, ուսուցիչը այս դէպքում թողնում է և հեռանում, ժողովուրդը էլի դիմում է մի քանի տիպագրներին:

Բայց դիպքը թէ հոգ կառավարութեան համար գիտար է քիչ ժողովուրդին հասկանցիլ ուսումնա-բանի օգուտը, նորա անհրաժեշտութիւնը, շարաբ-մէկը մեծ թաղումն է գտնվում, իսկ միւսը փո-քըրը թաղումը, և մի վանքի վրա որ գտնվում է գիւղից դուրս:

Վանքը ունի զանազան տեղեր մեծ կալուած-ներ, ջրաղաց որոնցից տաքվում է մեծ փող այս բոլորը կառավարում է մի վարդապետ, որ մի անգամ, խեղճ մարդ է արտաբաւում, Հարցնում ենք ինչ է վնասը նորա այնքան փողերը, տեսնե-լով նորան աղքատ գրովի մէջ, և մէջ տեղ չը գտնելով մի գումար: Ինչի Ելմիւսնից այս բա-նը բարձի թողի է արել: Գտնէ ինչ է ինքը չէ ու-ղում գրովի ցաւացնել, իրաւունք տար որ մի քանի պատուաւոր անձինք իւրաքանչիւր տարի

հայի պահանջին. նորա կալուածներից աշխա-տէին մի դրամաւոր յետ ցցելու, որից մի մաս Մեղրիի ուսումնարանի գոյութեան համար գոր-ծածվէր:

Գտնանք եկեղեցիներին: Նոյն ողորմելի գրովի մէջ են և գիւղի ե-կեղեցիքը. եթէ մտնում էս եկեղեցին, մի արտա-քին փայլ չէ ընկնում մարդու աչքի: Ինչպէս որ կային շատ տարիներ սորանից առաջ, այնպէս էլ այժմ են: Ուրեմն պէտք է փող ունենան, կասեն շատերը: Արեղքը կուտենայ փող այն եկեղեցին, որի կառավարչները միայն իրանց օգտի համար են մտածում, ապրում են իրանց գրպանի համար և բացի սորանից, երբ ոչ ոք չէ հարցնում նորա արածների մասին: Ելմիւսնից ստանում է իրան հասանելիքը, և հանդարտ թողնում:

10. Մարտիանց

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

«Արարատեան» ընկերութեանը 8000 ռուբլ. ու-ղարկելուց յետոյ, «Մշակի» խմբագրութեան մէջ հա-ւաքված կար յօգուտ «Արարատեան» ընկերութեան 3114 ռուբլ. և 57 կ. գումար, որից ծախս հանե-լով 198 ռ. (այն է 183 ռ. պ. Ն. Տէր-Վանդեան-ցին «Մարտիի լեզու» վերքը Կ. Պօլսի բարբառով տպելու համար ստուծ ծախս և 15 ռուբլ. վանի «Արարատեան» գրքոցին գրքեր ուղարկելու ծախս), մնում էր խմբագրութեան մէջ 2916 ռ. 57 կ. գումարը: Այդ գումարից 2000 ռուբլ. երէկ ուղար-կեցինք Կ. Պօլսի «Արարատեան» ընկերութեան վարչութեանը պ. Կ. Խուսիսերեանի փոխանա-կարգով: Մնում է, ուրեմն խմբագրութեան մէջ 916 ռ. 57 կ. գումար:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այն օրից երբ սկսեցինք հաւաքել փողը «Արարատեան» ընկերու-թեան համար, մինչև այսօր արդէն 10,000 ռուբլ. ուղարկած ենք յիշեալ ընկերութեանը:

Այս օրերս մեզ պատահեց մի նուիրեցու հայի հետ խօսելու:—Ամօթ չէ նուիրեցիներին, որ նրանք մինչև այժմ ոչինչ չեն նուիրել յօգուտ «Արարա-տեան» ընկերութեան, —ասացինք մենք:—Ինչպէս չէ, պատասխանեց նուիրեցին, մեր քաղաքով մի արեղայ էր անցել, գեղեցիկ քարոզներ էր կար-դացել եկեղեցում և բաւական զուժարներ նրան նուիրեցինք:—Բայց ում համար էր ձեր տուած փողը, հարբիքը մենք կրկին:—Չենք իմանում, պատասխանեց նուիրեցին, քիչ մտածելուց յետոյ, կարծեմ դա յօգուտ «Արարատեան» ընկերութեան էր: Այդպիսով տղէտ հայը նուիրում է փողեր, առանց իմանալու ում համար և ինչի համար է նուիրում:

Լուսմ ենք որ գեներալ Լազարովի հանդուցեալ կնոջ մարմինը, որ արդէն թողած էր թիճՅԼԽԻՄի վերայի գերեզմանատան վրա, Լազարովի ընտա-նիքը տեղափոխել տուեց Վանքի Մայր եկեղեցին որպէս զի տիկնոջ մարմինը թաղվի իր ամուսնու գերեզմանի մօտ Վանքի մայր-եկեղեցու գաւթում: Լազարովի որդիք աղաւում են Վեհափառ Վաթոյի-կոսին թող տալ իրանց մօր մարմինը թաղել իրանց հօր հետ միասին, բայց Ս. Ելմիւսնից բացասա-կան պատասխան է տալիս և ողորմելի ննջեցալը, որ իր վերջին բնակարանից արդէն հանված է, քանի մի օր է ի դուր ապստում է Վանքի եկե-ղեցու դրան առջև: Ինչ է նշանակում այդ տե-սակ անտակութիւն Ս. Ելմիւսնի կողմից:

Ալեքսանդրապօլի գաւառի ՀԱՄԱՄԼՈՒՆ գիւղի հայոց դպրոցի տեսուչ, հայր Աւագ Տէր-Սիմօ-նեանց, խնորհում է մեզ յայտնել որ իր դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցչի հայոց և ուսուցչ լեզուներ և թուրքարեւելիս աւանդուտ համար: Գպրոցում կան 40 աշակերտներ, և ուսուցիչը կը ստանայ տարեկան 400 ռուբլ. բնակարան, փայտ և լուսաւորութիւն: Յանկարողները թող դիմեն նամակով Տէր-Սիմօնեանց քահանային:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՅԻՆԱՍԻԱ

«Soudre» անունով նաւը հասաւ Պօր-Վանդր նաւահանդիսար. նրանով հասան և 117 քը-տորականներ, որոնց հայրենիքի նոր կառավա-րութիւնը թողութիւն է շնորհել: Նրանք ա-մենամեծ կարգապահութեամբ և աներեւա-կայելի արագութեամբ եղբրք լծան: Հասկա-նայի է թէ մարդս երկար ժամանակ ջրի վրա ճանապարհորդելուց յետոյ, որպիսի ազահու-թեամբ է շտապում դէպի ցամաք. սրա վրա աւելացրէք և այն ջերմ ցանկութիւնը, որով այդ քարտրականներից իւրաքանչիւրը կամե-

նում էր համբուրել հայրենիքի այն սրբազան ախիբը, որոնցից նա իրան մշանջնապէս գըր-կված էր համարում: Ճշմարիտ, դա մի շատ սրտաշարժ տեսարան է, թէ որպիսի երախ-տագիտական սուրբ զգացմունքով էին նրանք ողջունում եղբրքում փողփողոզ հանրապետա-կան փառքի դրօշակին: Ճանապարհորդների ցամաք իջնելու միջոցին, նրանց անհամբեր սպասող ժողովրդի բազմութիւնը, ինչպէս և ամեն անգամ, ճեցցէ հանրապետութիւն, կեց-ցէ ծրարախա, և կեցցէ թողութիւն աղաղակ-ներով թնդացնում էր Պօրվանդրեան զուարթ թերափները:

Այս անգամուայ ընդունելութիւնը աւելի անկեղծ և աւելի բարեկամական էր. մինչև անգամ հետաքրքիր հանդիսականներից շա-տները դժգոհութիւն էին յայտնում, որ Փա-րիզի պատգամաւորներից զոնէ մի քանիսը չե-կան ընդունելու: Հայրենիքի այդ կորած ան-դամներին:

Եթէ պատգամաւորները հրաժարվել էին այդ բանից, դրա պատճառն այն էր, որ նրանք չեն կամեցել իրանց ներկայութեամբ քաղա-քական նշանակութիւն տալ այդ ընդունելու-թեան, և վերջապէս նրանք իրանց ներկայու-թեամբ կարող էին մեղանշել հանրապետու-թեան սահմանադրական կանոններին, որով-հետեւ քարտրականների այդչափ հանդիսաւոր ընդունելութիւնը մի տեսակ ցուցմունք է յօդուտ կամիւնայի:

Հանրապետութիւնը ներեց նրանց սխալը, բայց դա աւելի չէ տալի երթողներու, որ նա համաձայնեց նրանց քարոզած վարդապե-տութիւններին: Հայրը ներում է իր որդուն նրա գործած յանցանքի մասին, բայց նա նը-բան չէ ստուծ լաւ որդի, ես քեզ ներում եմ, որովհետև դու լաւ գործ ես կատարել:

Պատգամաւորներից ներկայ էր ընդունելու-թեանը միայն Լուի-Բլան, բայց նրա ներկա-յութիւնը բարբառով պաշտօնագրան բնաւ-րութիւն չունէր: Նա ներկայ էր ոչ իբրև ազգային ժողովի անդամ, այլ իբրև նախագահ այն ժողովի, որի նպատակն է օգնութիւն հասցնել կարօտ քարտրականներին. պ. Լուի-Բլան, իբրև վերջիջեալ ժողովի նախագահ, կամեցել էր անպատճառ ներկայ գտնվել օգ-նութիւն հասցնելու ժամանակ, և այդ այն պատճառով, որովհետև առաջին օգնութիւնը շատ անկանոն կերպով էր բաժանված, և այս դժբաղդներից շատերը, նաւահանգստի կայա-րանից դուրս գալուց յետոյ, ստիպված են ե-ղել մաքառել ամենավերջին թշուառութեան դէմ: պատմում են, որ այդ անտունեղ և ա-ռանց որ է պատասպանի թշուառները երա-նիք են տուել իրանց քարտրական վիճակին եթէ թողութեան միակ առաւելութիւնն այն էր, որ նրանք գային հայրենիք այդ տեղ քաղցածութիւնից մեռնելու, այդքանն աւե-լի հիշատ էր և Ամերիկայի քարտրանքի մէջ գտնել:

Պօր-Վանդր հասած ճանապարհորդներից հարիւր հօդի Փարիզ պէտք է գնան, մէկը որ փոքր ինչ հիւանդ է, կուղևորվի Պարիզի նա, իսկ մնացածները կը ցրվեն զանազան քաղաքներ:

Ինչ սրտաշարժ տեսարան, մէկին սպասում է միակ որդու տէր որբւայրի ծերունի մայրը միւսին անպաշտպան հայրը, չորրորդին այն նազելի նշանածը, որի հետ կամիւնայի այլ նշանաւոր թշուառութեանից դեռ մի շաբաթ առաջ խօքը էին տուել միմեանց հետ ա-մենանախաւ...

Հարեան Մարգարիտան իդէպական սիրով անջակտելի շղթաներով կապված էր ովկիսո-նոսի միւս ամբը հայրածիվ քարտրական Շար-լի հետ. ովկիսոնոսի այդ անտահման անդունդը անդոր էր բաժանել երիտասարդ զոյգի կրա-տրիանի մօտի սուրբ դաշնակցից յետոյ, վճռել էր երբէք չը բաժանվել այդ ցնորական ու-րուականից. որչափ յուսահատական է սեղե-

նա նոյնչափ էլ եւանդուն է: Վարդարիտը յա-  
ճախակի այցելութիւններ էր անում Բուշո-  
նեան շատրվանին, և ամեն անգամ նրա առաջ  
պատերազմում էր այն սիրուն լուսնեակ զի-  
շերը, երբ նա առաջին անգամ Շարլի հետ  
միութեան ուխտ էր կապում: Վարդարիտը  
նուիրական շատրվանի մօտ աւելի միութեան  
րութիւն էր գտնում, քան թէ Նայմի հա-  
բեմական աղջկէր Մէկիէի Զէմ-գէմի աղբիւրի  
մօտ:

Շարլը արտասովորութեամբ վերադառ-  
նալիս, մտքով թռչում էր դէպի Բուշոնեան  
շատրվանը: Խաղաղ լուսնեակ զիշերային լուս-  
թեան մէջ, յեցած «esudre» լի վանդակներին,  
նա իր աչքերը գցում էր ուղիղ անոտի խորհր-  
դաւոր տարածութեան վրա, և յանկարծ նրա  
արծաթափայլ ալիքները մէջ նա տեսնում է  
Վարդարիտայի նազելի պատկերը, որը կար-  
ծես նրան ատում էր: «Ես միշտ մի և նոյն  
յուրեղանիքն եմ, որ քեզ շարունակ հրա-  
ւիրում եմ իմ ալիքները մէջ:» Հրաշայլ ցը-  
նորը, հեշտական միբաժ, որքան կախարհիչ է  
քո պաշտամբը վշտահար սրտերի համար:

Մի քանի օրից յետոյ Փարիզի հարաւային  
երկաթուղու կայարաններէն մէկում առաւօտ-  
վանից սկսած սպասում էր մի մանկահասակ  
օրիորդ:

Երկուշաբթի ժամը կը լինէր մօտաւորապէս  
8-ը, երբ հեռուից լսուում էր լօկոմոտիվի  
զօրեղ սրցը: Աքտրականները, կարելի է երե-  
ւակայնի թէ ինչ ազահութեամբ էին դուրս  
թափուում վազոններէն: Նրանցից իւրաքան-  
չէրը իրանց ծնողներէ, սիրելիներէ զԲՐ-  
կախառնութեան մէջ էին:

Մանկահասակ օրիորդը Շարլի Զերմ դրկա-  
խառնութեան մէջ, արտասուքի շնորհալի  
հեղեղից երկու բառ անգամ չէր կարողանում  
միևնանց ետեւից արտասանել...

ՄԱՍԻՍԻՆ ԹՂԱՍՅՈՒԹԻՒՆԸ

Վատարականին հարստահարութեանց  
յանկարծական կրկնութեան վրա զարմացած,  
կը ստիպուիմք ձեր բարձր թերթերով ի լուր  
աշխարհի հասնել, թերևս ամեն ոք նորա  
պատճառ բացատրել հաճի թէ ինչ է արդեօք,  
որ փոխանակ բարեկրթութեանց գործարու-  
թեան սկսեց այս աւերածներ կրկին նոր ՚ի  
նորոյ սաստիկանալ և ըստ ամենայնի կրկնել  
չայ ժողովրդեան կեանք և զոյք, որոյ մասին  
ամբողջ ազգային լրագրական խմբագիր էջնե-  
տններէն խնդրելով որ բարեհաճին յօգուտ  
ազգին և ՚ի կարեկցութիւն թշուառ Հա-  
յաստանի ազգասիրաբար իրենց աշխարհալուր  
թերթերուն անկիւնը այս քանի տողերուն  
շնորհել և հարստահարեալ Հայուն ազգակա-  
ներուն էջ մը թող տալ, և երբ կը պակսել  
առ իրենց խմբագրատուն ուղղեալ նամակնե-  
րը, թող պատրիարքարան զիմեն և հոն գե-  
տեղաւորները մաս մաս հրատարակել փու-  
թան, ինչպէս որ այս մի մաս որ ՚ի նորունս  
տեղե ունեցած է և կարել ցաւալի որուն տո-  
ղերուն որ և է Ազգին անհաս եթէ հասն-  
դիպել, ձեմ կրնար ըսել թէ առանց կաթիլ  
մը արցունքի և կամ ձակտին զարնելու չը  
ստիպայ այսպիսի եղեռնագործութեան, որուն  
նման անթիւ 800 տարիէ ՚ի վեր Հայն կրած  
և դեռ ցարդ կը կրէ. և չը գիտեմ ինչ պատ-  
ճառաւ. եթէ կառավարութեան կարեկցու-  
թիւնները միմիայն Հայուն համար չէ ըսմ  
կը սխալմ: այլ թող այժմ ականջ ղնէ նոյն  
իսկ Ներսիսային, որն որ Հայկական խնդիրը  
այսօր իր առարկաներէն մինն դարձած է, ու-  
րուն մեր ակնատես պատմութիւն առէք  
և դուք և ցրուեցէք աշխարհի հրապարակ  
ուր որ մի մարդու սիրտ կայ Հայն ցաւակցե-  
լու:

Քաղաքիս Արևմտեան հիւսիսային կողմ ճո-  
վիկերայ Արծիէ նահանգին մէջ գտնուած  
քանի զիւղերուն մէջ պատահած յունիս ամ-  
սոյ 22-րդ օրուան պատահած եղբրական

հրկուցի զարստահարութեան դէպք մը, որ Հայտար-  
ցի Հիւսէն աղայի որդին ՚ի վաղուց անտի  
չարագործ և մարդատու զազան Վամիգ ա-  
նուն Քիւրդի ձեռք տեղե է ունեցած անդի-  
մանալի եղեռնագործութիւն, որն որ յիշեալ  
աւուր, այն է կիւրակէ գիշերին 16 հեծեալ  
ապաւտակներով յիշեալ նահանգին Զիրէքի  
զիւղին վրա յարձակելով, այս միջոց ըստ  
իւր նախնի սովորութեան յարձակման և աւա-  
րատութեան բուն յարմար միջոց դասած էր,  
որովհետեւ նոյն զիւղերու բնակաց սովորու-  
թիւն է այս միջոցներ իրենց անասնոց ձմե-  
ռուան խոտ առնելու համար զիւղերէն կը  
մեկնին և զիւղեր պարսպ մնայով պատե-  
հուութիւն կուտան յիշեալ բարբարոս Համիգի  
չարագործութեանց, որուն բնակիչք 20—30-ի  
չափ պատրաստի լինելով զինեալ կը դիմա-  
դրեն իրեն՝ իրենց զիւղ մտնելու, որն որ ձա-  
րահատեալ, երբ յիշեալ զիւղի դաշտ կիջնայ  
իւր գործակիցներով հոն պատահած հնձա-  
հարներու վրա կը յարձակին, որոնք դարձեալ  
զիմանալով ոմնք կը վերաւորուին, և անոն-  
ցմէ մէկին գլուխ կտրելով հետ կը տանի  
մրմուշով թէ այս ձեր զիւղի կողմն թող  
աւանդ մը լինի իմ քով ՚ի յիշատակ ձեր դի-  
մադրութեան, մինչև որ կարգ գտնամ և իմ  
վրէժ ձեզմէ առնեմ. և անտի կիջնայ արշա-  
լոյսին դէմ նոյն զիւղին վրա, ուր որ իր բու-  
լը քնն ՚ի գործ կը դնէ, նախ իր ընկերնե-  
րէ՛ զիւղին բոլորակը պահակներ դնելով ինք  
քանիներով զիւղ կը մտնայ, ուր որ ըստ վե-  
րի ծանօթութեան քիչ մարդիկ կը գտնուին.  
մէկէն տանց վրա յարձակելով ալ ոճիր չը մը-  
նար որ ՚ի գործ չը դնէր, որուն համառօտ  
նկարագրութիւն չը կարծեմ թէ ընթերցու-  
ղաց ձանձրութեան տեղի տուած կ'ըլլամք.  
յիշեալ վայրագն նախ զիւղին երեւելի բա-  
կահ մտնելով հանգիլ կուզէ, ուր որ իր մար-  
դիկներէն բռնուած մի ալեւոր ծերունի կը  
ներկայացնեն ցուցնելով «թէ սա կը փախչէր  
դուրսը լուր տանելու» որուն կը հրամայէ  
սինին կապել և ժամէ մ'ետք արձակելէն  
վերջ, ՚ի զբօսանս իւր կը հրամայէ դորա ե-  
րես ամբողջ քերթել տալ, և զայն այնպէս  
արիւնշաշաղախ թողով կը հրամայէ զիւղին  
թէ արք և կանայք իրեն կանչել. այն ինչ  
չարագործները զիւղին մէջ կիջնան, մարդիկ  
զեզերու և մարգանքու մեջէն քաշելով և  
կանայք թնիրներու և ընթակներու տակէն  
չարաչար գետնաբարձութեամբ երբ իրեն կը  
ներկայացնեն, նախ դոցա առանին եղած ըս-  
տացուածք թէ դրամ և թէ զոյք և թէ  
կանանց շորիղէն և արծաթեղէն զարդերը  
բռնել պահանջելէն ետքը, կիջնեն մանկա-  
մարդներ իրեն քով բռնաբարելով. . . և մար-  
դիկներէն շատերը որն ձեռք և ոտք լիցելով  
իրենց թշուառութիւն և ոչինչ ունենալ կը  
յայտնէին, զայրանալով ոչխարի նման գետին  
փռել կուտայ:

Հոն մուրացկանութեան դիմող Ռշտունցի  
Բարսեղ ամուսնով անձի մ'ականջները կտրել  
տալով երգամբ կը ստիպէ թէ զքեզ իբրև  
նշանեալ մը Վանայ կուսակալին պատմելու  
կը զրկեմ, ինչ որ տեսար և լուար: Յետոյ  
էրօ անուսնով նոյն զիւղացի անձն յառաջ բե-  
րելով, որոնք սպանդանոցի ոչխարին պէս լուռ  
և կտրչին առջև կեցած մահուան կը սպա-  
սեն. միւս կողմէն կանանց և մանկանց աղա-  
ղակները օղը կը թնդայնեն. նա բոլորովին  
ժայռացած ինչ որ կուզէ այն կնէ: Յիշեալ  
էրօն ևս գետին փռելով կերտու իւր հօր  
զիւղուն վրա զանի սպանել՝ առարկելով թէ  
գլուխ էիք անցեալ աշնան իմ այս զիւղին վե-  
րա յարձակելու առթիւ զիւղացոց կողմէն կա-  
ռավարութեան զուրը բողբող, անհար է  
քեզ միւս անգամ իմ սուրբն ազատուիք: այն  
ինչ անձամբ իր մերկացուցած սուրը նորա  
պարանոցին վրա կը դնէ և կէս կը կտրէ:  
Խոխողովալ անձը ձիւ կը բռնայ իր կողմ հա-  
սիր և զիս ազատեա: Պշուառ կին՝ որ իր  
երկիւղէն ու մերկութեան զուրս չէր կրնար

կրնել, իր թեկ ապարանջանները հանելով որ  
այն միայն մնացած էր, իբրև էրկան փրկա-  
նաց զին՝ նորա զիւղին վրա կը ձգէ, որով կա-  
զատի կիսազէն այրն դարձեալ երկու ականջ  
կորուստ տալով և միւսանգամ ալ ողջանալու  
յուսահատ: Վարդը գալով քաղաքացի Վարպե-  
տեան Համարձում անուն երիտասարդին, որ ՚ի  
նայն զիւղ կը գտնուէր առևտուրի առթիւ,  
նորա ականջներն ևս կը սպառնայ կտրել, ա-  
սելով թէ՛ գլուխ իսկ աւելի մօտիկ ես կու-  
սակալին, և իմ արարք զիւրութեամբ կրնաս  
պատմել նորա. ուստի հարկ է քեզ յատուկ  
ցոյցով մը նորա զրկել և յայտնել թէ զգու-  
շացիր քու կառավարութեան դուռնէ ևս  
չատ մը գլուխները տանելու, զի Համիգ  
Հիւսէյնեան թոռն եմ. և երբ խեղճ պա-  
տանին ստոր ձեռքն ու ոտքը կիջնայ (որուն  
ամբողջ զոյքն արդէն յափշտակած էին),  
միայն իւր կեանքն ազատելու կը ձգնի, և  
մեծամեծ երողութեամբ կը հաւատարմացնէ  
Քիւրախի իրեն պատուիրածները կուսակալին  
հաղորդելու, հազեւ հազ մերկ ու բոկ կա-  
զատի. իսկ նա ձաշի նստելով կը հրամայէ  
զիւղացուց և քաղաքացուցն պար բռնել իւր  
սեղանին բոլորակը, խաղալ ի խնձոյս իւր ա-  
ւառարութեան, և այսպիսով մինչև ցերեկեան  
ժամ 5-ին եղեռներ չը մնայով ՚ի գործ կը  
դնէ, և 60,000 դումարի հասած կողպու-  
տով կը մեկնի զիւղէն, նորա մօտ Քարաքե-  
շեղ զիւղն անցնելով, ուր դպրոց անուսնով մի  
տան վրայ կը յարձակի, դռները կը խորտակէ,  
մարդիկ զիւղի սուները կողպտելու կարճակէ,  
և ինք հոն կը մտնէ, ուր թէ զիւղին մէջ  
քանի տարիէ ՚ի վեր վարժապետական և մա-  
սամբ առևտրական պաշտօն վարող Աբրահամ  
անուն անձի զոյքերն, զգետներն և պատ-  
րաստի դրամներն, և թէ ապահովութեան  
համար հոն դուռած եկեղեցական սրբազան  
անօթներն, արծաթեղէններն, զգետներն և  
եկեղեցուցն պատրաստի դրամն ամբողջ կողպա-  
տել է վերջ, հօտի դէզի մը մէջ մազապուր  
պահուող վարժապետը գտնել կորնէ զայրաց-  
մամբ սպանալով թէ՛ արդէն ես զիտեմ որ  
իմ վրաս բոլոր հանրագիրներ գրող և զիւղա-  
ցուց բողբելու խորհուրդ տուող այն անձն  
է միայն, եթէ ձեռքս ինչայ՝ անտարակոյս  
նորա արիւն ինձի համար է: Միւս կողմէն  
իր կողպտիչները իրենց պաշտօնը լրացնե-  
լով բայց յերկու տան միայն անասուններէն՝  
ամբողջ զիւղ պարպելով, 15,000 զրշ հաշ-  
ւով թէ դրամ և թէ զոյք առնելով մեկնե-  
ցաւ, ըստ ամենայնի ազատ և աներկիւզ:

Յաւալին այս է որ ժողովուրդը տեղոյն  
նահանգապետին կը դիմէ անմիջապէս սպա-  
տակները բռնելու. նա բոլորովին անտարբեր,  
միայն կը հրամայէ թէ պէտք է քաղաք կու-  
սակալին դիմէք, որն որ եթէ կամենար կրնար  
քանի մը ոստիկաններով նոցա զիմաց ելնել:  
Խղձալիք քանի օրէն ետք հազիւ մէկ մէկ ի-  
րենց մերկութիւնը պատող ծրարներ գտնե-  
լով քաղաք կը հասնին և կուսակալին կը  
բողբեն. կուսակալը նորէն սարձանալով յի-  
շեալ տեղերուն պահակ ոստիկաններ կը զրկէ  
խոտանալով իրենց թէ ակից ետքը ըստ ա-  
մենայնի սպահով կեցէք: Եթէ զիւղացիք  
թող միայն իրենց մերկութիւնն ապահով  
պահեն ակից ետքը, որովհետեւ իրենց կու-  
րուստը գտնելու բնաւին անյոյս են, որովհետեւ  
մինչև ցարդ փորձեր հասկցուցած են մեզ և  
նոցա թէ Հայու կորուստ անգտնելի է, և  
զարմանք է այս որ չը գիտեմք թէ ինչ է  
պատճառը որ այս միջոցիս Հայաստանի հա-  
րստահարութիւնը մէկէն ի մէկ նոր ՚ի նորոյ  
ոտքի ելած և ամբողջ Հայութիւն կը սարա-  
վեցնէ. մինչև իսկ քաղաքացիներէն ոչ ոք  
չը համարձակիր դուրս առևտուրի ըլլալ, և  
զիւղացին ալ չը վստահիր մէկ րոպէ իր  
տունէն հեռանալ, քանի որ ապահովութիւ-  
նը վերջին աստիճան բարձուած է, որուն  
պատճառը եթէ կարելի է մեզ ըսել՝ կառա-  
վարութեան անհոգութիւնն ու անտարբերու-

թիւնն է, զի այս չարեքները գործող ոճրա-  
գործները այսօր ըստ ամենայնի ՚ի շնորհ  
պատերազմի՝ ամբողջն ալ կառավարութեան  
կապախը, Կնէլի, Վարթիսի և Նաբո հրա-  
ցաններով և շատ մը փամփուշտներով զինեալ  
և պատրաստեալ են. այսօր որ և է տեղոյն  
գաւառապետները յապահովութիւն երկրին  
պէտք կը զգան փոքրիկ դաշնայնի քաղաքի  
մէջ քիւրդերու վտանին կախելն արգելել, և  
միւս կողմէ տեղութեան այլքան կողպտեալ  
զէնքերու մասին անտարբեր աչք կը դիտեն  
և ցորչափ այս անտարբերութիւն Տաճկոս-  
տանի հօրհոյնին վրայ կը տրէ, մէկ խօսքով  
ես կըրեմ՝ թշուառ և անկանելի դուրս մը  
մէջ խորատուած է ամբողջ Օսմանեան զոյու-  
թիւն, (այն է թէ Հայուն և թէ Տաճկին):

«ՄՅԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ
- Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: «Праб. Вѣстн.» լրագիրը տպել է Լիվադիայից, սկսե-  
տեմբերի 18-ից ուղարկած հեռագիրը, որ  
հաղորդում է թէ Քաղաքը բարեհաճեց և  
բնիկ, ցերեկվայ ժամը 12-ին աղբակով ձերկելի  
նաւով դէպի Սեփասուպոյ: Այսօր, 9 ժամին  
առաւօտեան, նորին Մեծութիւնը զօրահասն-  
դէս արաւ, յետոյ ուղևորվեց Նալտա, ուր հա-  
սաւ երկայնան ժամը 5-ին:
- ԿՐՈՆԵՏՍԿ, 19 սեպտեմբերի: «Երեմուկա»  
նաւը հեռացաւ դէպի Կոպէնհագէն:
- Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Պետա-  
կան բանկի 5% տոմսակր առաջին շրջանի  
արժէ 94 ռ. 62 1/2 կ., երկրորդ 93 ռ. 87 1/2  
կ., երրորդ 93 ռ. 62 1/2 կ., ներքին առաջին  
50% փոխառութեան տոմսակր արժէ 231 ռ.  
25 կ., երկրորդ 226 ռ. 50 կ., արևելեան 91  
ռ. 62 1/2 կ., երկրորդ 91 ռ. 62 1/2 կ., ոսկի 7  
ռ. 79 կ.: Ռուսաց մի բուլլ Լոնդոնի վրա  
արժէ 25,25 պէնս, ուսաց 100 բուլլ Կեր-  
մանիայի վրա արժէ 215 մարկ 25 պֆ.,  
Փարիզի վրա 266 Ֆրանկ 75 սանտիմ: Տրա-  
մադրութիւնն հանդարտ է:
- ՎԻԵՆՆԱ, 20 սեպտեմբերի: Կոմս Տրաւա-  
մայստէր նշանակված է նախագահ, իսկ իշ-  
խան ԵՆ յուրուն և Կոնստանտին Չարտօրիկի  
փոխ-նախագահներ աւստրիական ըէլիտարտի:  
Ֆրանց-Յոյսէի կայսրը շնորհեց Կրաշչիկի  
հեղինակին, նրա յօդվիտանի առիթով, Ֆրանց-  
Յոյսէի շքանշանը:
- Վ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Մահուդ-  
նէզիմ փաշան, առաջին անգամ քաղաքից  
վերադառնալուց յետոյ, կանչվեցաւ ներկայ  
գտնվել մինիստրներին խորհրդին: Սեպտեմբերի  
22-ին, շաբաթ օրը, կը կայանայ մինիստրնե-  
րի խորհրդի արտակարգ նիստը, որ տեղի  
կունենայ պալատում, Սուլթանի նախագա-  
հութեամբ:
- ՎԻԵՆՆԱ, 19 սեպտեմբերի: «Polit. Corresp.»  
լրագրին Վ. Պոլսից հեռագրում են, որ Վիեն-  
նայի թիւրքաց դեսպանը, Էդհէմ փաշան,  
զեկուցում տուեց Բ. Կրանը իշխան Բիւսմա-  
կի Վիեննայի մէջ այցելութեան մասին: Քիւր-  
քաց դեսպանի խօսքերին նայելով գերմանա-  
կան կանցլէր յայտնեց, որ Կերմանիան ցան-  
կանում է Բերլինի կոնգրէսի ձիւղ կատարում,  
թէ Է. Ռուսաստանը դորանով բաւականացած  
չէ:
- ԲՈՒԽԱՐԷՍ, 19 սեպտեմբերի: Բօլզարական  
իշխանը հասաւ այստեղ 28/15 սեպտեմբերի:  
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի: Պետա-  
կան բանկի 5% տոմսակր առաջին շրջանի  
արժէ 94 ռ. 62 1/2 կ., երկրորդ 93 ռ. 75 կ.,  
երրորդ 93 ռ. 62 1/2 կ., առաջին ներքին փո-  
խառութեան տոմսակր արժէ 231 ռ., երկրորդ  
226 ռ. 75 կ., արևելեան առաջին 91 ռ. 75  
կ., երկրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 73 կ., ուս-  
աց մի բուլլ Լոնդոնի վրա արժէ 27,16  
պէնս: Տրամադրութիւնը հանդարտ է, գոր-  
ծեր չը կան:
- Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

**ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՅԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄ-ՆԱՅՈՅԺ ԲԺԻՅԿ Լ. Ի. ԻՂԵԼՊԻՅԻՄԻ Թոյլ են տւած**  
 Մօսկւայի ԲՃՇԿՆԵՆ ՖԵԿՈՒՆՏԵՏԻՑ: Եւր միջոցները մեծ գործարարութիւն են գտել և առաջարկում են իբրև ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և ատամների համար: Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆՆԵԼԻՈՒՑ, սառեցնում են ԼՕՐՁՈՒՆԻՒՄ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են աւնում:

Ետամնաբոյժ բժիշկ Լ. Ի. Եղեբէյի ԳԼՍԵԼՈՐ ՊԵՆՏԵՆՆԵՐ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՉՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐՁ, ՍՕԿՈԼՕՎԻ ամսը:  
 ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԱՍԵՆ և անդրկովկասեան գլխավոր ՊԵՆՏԵՆՆԵՐ: Ծախողների ՆԵՇՆԵԼՈՐ ՕԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

**ՉԻԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ**  
 ՆՕՐԿԵԳԻԵՅԻ ՄԵՐԸՆԾ ԶԻԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկւայի ղեղազործ:

**ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ**

Գիւջի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները գրեցին ինձ պարապել նրանց արդիւնադրո՞ւթեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիւթից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ֆրանսիական (ԳԻԻՕՅԻ) ՊԵՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ուսւ բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԵՐՏԱՍԵՄԵՆԵՆ ԵՐԳԻՆԵԼԻՍՈՐՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր ղեղատունները և տեղական պահեստները: Գլխավոր պահեստները. Մօսկւայում, Լուբանսկի ղեղատուն Ե. Ս. Գիւրշիւրաի և Բ. Կեօբեր և ընկ. Կիւրսկիի վրա: Թիֆլիսում Յուրիսովի և Բաստովի ղեղատուն:

11—25

Մեր Ազգային դպրոցների Մեծապատիւ տեսուչներին և նոցա օգնականներին

«Աւսուցի մարտի լիզուի» վերնադրով Այրենարանի չորրորդ տպագրութիւնն սկսելուց առաջ ուզում եմ իմանալ ձեր նկատողութիւնները այդ գրքի մասին: Եթէ կարեւոր համարէք ինչ ինչ փոփոխութիւններ կատարել, յաւելածներ և յապաւումներ անել, եւ յօժարութեամբ կը կատարեմ առանց դիպչելու բուն սկզբունքին:

Սյր գերբն է ընդունուած մեր ազգային գլխավոր դպրոցներում՝ Քիջլիսի ներսիւսան և Գայեանեան դպրոցներում: Երևանայ թեմական դպրանոցում, Ալեքսանդրապոլու տղայոց և օրկորաց դպրոցներում, Արարաբու ձողեր սեմինարիայում և Թեմի դպրոցներում: Ինձ յայտնի է միայն միւս մանր դպրոցներից որոնցում է ընդունուած: Սակայն եւ այս ընդունելութեանց ազահութեամբ շահուելու բաղձանք չունեմ, իմ միակ շահս կը լինի այն, որ դա իւր եղանակով բովանդակութեամբ և գնովը համապատասխանէր այդ ընդունելութեանը, իսկ այդ վեր է միակ մի հողու ուժից, պէտք են բարոյապէս և ընկերաբար օգնողներ, ահա այդ օգնութիւնն եմ եւ խնամարար խնդրում ձեզանից: Իմ հացէն—Նուշի, Ազգաբոս Աղայեանցին:

3—3

Ահաւասիկ այն բարեսէր ազգայինք որ հաճեցան յանձն առնուլ նպատ հաւաքելու «ԳՐՈՅԱՍԻՐԱՑ—ԱՐԵՒԵԼԵԱՆ» ընկերութեան համար: Թիֆլիս. Պ. Աբգար Յովհաննիսեան Պետրոս Իմենեան, բժիշկ Աւետիք Բաբայեան: ԵՐԵՒԱՆ. Ռուբէն Ջալալեան, Վասիլ Եղիազարեան, Սարգիս Բէզնազարեան, Տիգրան Աբրիկեան: ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ. Աբիստոմ Յովհաննիսեան, Հայրապետ Ղուկասեան: ԱՍՍԻՔՍՈՒՄ. Արժ. Տէր Խորէն քահանայ: ԱՍՍԻՑՈՒՄ. պ. Գասպար Մելքոնեան, Մկրտիչ Ճարակեան, Մովսէս Սամուէլեան, Յովակիմ Վեղամեան: Այլ անձեր են որք յուսադրեցին զիս ամէն միջոցներով ընկերութեան դպրոցներուն օգտին աշխատել:

4. ՇԱՀՆԱԶԱՐ 2—5

Հիւանդների ընդունելութիւն և էլէքտրական սէանսներ ԳՕԿՏՐ ԲԱԲԱՅԵԱՆԻ մօտ սկսվում են այս ամսու 23-ից ԱՄԵՆ ՕՐ, բացի ԿԻՐԱԿԻ ԵՒ ՏՕՆ ՕՐԵՐ, ժամը 9—11 ԱՌԱՌՍՏԵԱՆ, 6—7 ԵՐԵՎԱՆԵԱՆ Սերգիսի վրայ փողոց, տուն Բայրիզուրովի № 14.

1—3

Թիֆլիսում էժան ծախվում է մի ՏՈՒՆ Պրիկալի պարտքով, Կուկիայում, Ալեքսանդրովսկայա փողոց, տուն № 63.

5—5

Նատալիա, Գրիգոր և Յովհաննէս Արարիկեանները, ցաւով սրտի յայտնելով առաջին ամսուան և երկրորդների հօր, Սարգիս Եւգորովիչ Արարիկեանի մահուան մասին, խնդրում են հանդուցելի ծանօթներին և բարեկամներին ներկայ գտնվել յուզարկաւորութեան հանդիսին: Հանդուցեալն, իր սեփական, Սուրբ Նշանի փողոցի վրա գտնվող տանից կը տանեն Սուրբ Նշան եկեղեցին, սեպտեմբերի 23-ին, առաւօտեան 9 ժամին: 1—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՁ և Տարրական Ուսումնարան

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և ընունութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ին 1879 թ:

Մանկական Պարտեզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը: Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Աւսուցնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիական 1 և 2-րորդ դասատուները մտնել:

Սոլյախի, Վելիամիսովսկայա փողոց, Իշե. Ամատուտու տուն, № 11. 4—4

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22 Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Սեպտեմբերի 21-ին)		ՆՆՈՒԳԻՐ		ՓՈՒԹԻՓԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ		ՓՕՍ		ԲՃՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻՆՆԵՐ	
Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.
Ոսկին (պորտուգալական)	8	15		Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ամէն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամէն տեղ ուղարկելու, ընդունվում են ամէն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նաւաւորութիւնը մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:		Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Նին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Նին 20 կ. 72 պր. 1000 »	1245			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Վերջինի 5% առաջի փոխառութեան տու. 100 »	238			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Երկրորդ 5% վերջինի »	237			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Մարտի կուրսը 266—	100			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Լծողների կուրսը Օրեայի վրա	9	55		Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Վնայի կուրսը արժէ 121 գլ.	100			Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւանդութիւնների:		— ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑ. Գ. Պ. «Ժամանակի կրթված որդին» վերնադրով ձեր պատկերը կը տպելը հետևեալ համարի մէջ: — ՄՕՍԿՎԱ, Ա. Յ. Մ. Ստացանք նամակը: Հացէն կը փոխենք: «Մշակի» № 142 չենք կարող ուղարկել, որովհետև այդ համարից այլ ևս չունենք խմբագրատունը: — ՇԱՍԱԽԻ. Ա. Ա. Այսուհետև կուղարկենք ձեզ «Մշակի»: Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը: — ԵՐԵՒԱՆ. Լ. Տ. Շնորհակալութեամբ ստացանք ձեր նամակը: Կը տպելը հետևեալ համարներից մէկում: — ԱՍՍԻՑՈՒ. ***. Ի զուրէք կարծում, որ ձեզ պարտեւած է այն ստուումային կրակը, որ ոգևորում է բանաստեղծներին: Մի ձանձրացնէք խեղճ մտղաներին:	
Գարեթի բարակը . . .	4	80		Քիլոգրամի մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէս առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէս:		Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է թիֆլիսում ամէն օր: Բացի փոստից երեկոյեան, ճիւղաբերութիւնը կը շարժվի փոթի թիֆլիսի և Կարաբաղի փոթի միջև օր: Նույնպէս տրակից չորեքշաբթի և կիրակի: Բեռնափոխի տրակից երեքշաբթի և շաբաթ:		Ներկուշաբթի. Լիսիցիով և Գորակովիչ ներքին հիւան			